ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ, ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ – 2018
10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ
ՀԱՐՑԱՏՈՄՍ – տևողությունը՝ 150 րոպե

Ի. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (15 միավոր)
1. «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (9 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1-8-րդ առաջադրանքներ: (0,5 X 8 = 4 միավոր)

1. Ե՞րբ է գահակալել Իշպուինին.
   1) Ք. ա. մոտ 835–825 թթ. 3) Ք. ա. մոտ 810–786 թթ.
   2) Ք. ա. մոտ 786–764 թթ. 4) Ք. ա. մոտ 825–810 թթ.
2. Ե՞րբ է գահակալել Երվանդ Վերջինը.
   1) Ք. ա. մոտ 240–220 թթ. 3) Ք. ա. մոտ 580–570 թթ.
   2) Ք. ա. մոտ 220–201 թթ. 4) Ք. ա. մոտ 260–240 թթ.
3. Ո՞ր թագավորությունն է Ք. ա. 830–ական թվականներից աստիճանաբար իր իշխանության ներքո միավորել Հայկական լեռնաշխարհը.
   1) Արմանի 2) Միտաննի 3) Հայասա 4) Նաիրի
4. Պարսից ո՞ր արքայի դեմ էր ապստամբել Կյուրոս Կրտսերը.
   1) Կյուրոս II–ի 2) Դարեհ I–ի 3) Արտաքսերքսես II–ի 4) Դարեհ III–ի
5. Ե՞րբ է Տրդատը մեկնել Հռոմ՝ թագը Ներոնից ստանալու նպատակով.
   1) 64 թ. 2) 66 թ. 3) 65 թ. 4) 62 թ.
6. Ո՞ւմ են պատկանում «կամուրջներ չհանդուրժող Արաքս» խոսքերը.
   1) Տակիտոսին 2) Վերգիլիոսին 3) Արիանոսին 4) Պլուտարքոս
7. Ե՞րբ է կնքվել Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը.
   1) 278 թ. 2) 297 թ. 3) 298 թ. 4) 287 թ.
8. Ո՞ր արքայի մասին է հույն պատմագիր Պոլիբիոսի ստորև բերվող արտահայտությունը.
   «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»:
   1) Պարույրի 2) Տիգրան Երվանդյանի 3) Տիգրան II–ի 4) Արտաշես I–ի

բ. Լրացնել պատասխանը: (1 X 2= 2 միավոր)

1. Արտաշեսյան տիրակալների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության. *(1 միավոր)*

ա. Տիգրան III
բ. Տիգրան I
գ. Արտաշես II
դ. Արտավազդ II
ե. Արտավազդ I

1	2	3	4	5

2. Կատարել համապատասխանեցում. *(1 միավոր)*

Երկիր	Մայրաքաղաք
1) Ատրպատական	ա. Նինվե
2) Ասորիք	բ. Փրաասպա
3) Եգիպտոս	գ. Սամոսատ
4) Կոմմագենե	դ. Մծբին
5) Ասորեստան	ե. Երվանդաշատ
6) Հայաստան	զ. Ալեքսանդրիա
	է. Անտիոք

1	2	3	4	5	6

գ. *Լրացնել պատասխանը:* (1 X 3 = 3 միավոր)

1. Գտնել երկու ճիշտ պնդումները. *(0,5 X 2 = 1 միավոր)*

1) Ք. ա. 5 թ. Օկտավիանոս Օգոստոսը մեծ բանակով Հայաստան է ուղարկել իր որդեգիր Հուլիոս Կեսարին, որը գահընկեց արեց Տիգրան IV–ին:
2) Տիգրան III–ի շեշտված հակահռոմեական դիրքորոշման պատճառով Հռոմը նրան գահընկեց արեց և գահ բարձրացրեց նրա կրտսեր եղբորը՝ Արտավազդ III–ին:
3) Հայաստանը թուլացնելու նպատակով Հռոմը նրանից անջատեց Ատրպատականը և այնտեղ թագավոր կարգեց իր կամակատար Արիոբարզանեսին:
4) Արտավազդ II–ը Կրասոսին առաջարկում էր պարթևների դեմ արշավել ոչ թե Հայաստանի հարավով, այլ Ասորիքի անապատներով՝ հուսալով երկիրը զերծ պահել հռոմեացիների ասպատակություններից:
5) Պարթևները ոչ միայն չստացան Պոմպեոսի խոստացած տարածքները, այլև Պոմպեոսը ճանաչեց Տիգրան Մեծի «արքայից արքա» տիտղոսը:
6) Ք. ա. I դարում ապրած հռոմեացի պատմիչ Տակիտոսը հավաստիացնում է, որ Արտաշատի տեղանքն ընտրել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը:

2. Գտնել երկու սխալ պնդումները. *(0,5 X 2 = 1 միավոր)*

1) Մերձավոր Արևելքում Պարթևստանի դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I–ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:
2) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I–ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Փոքր Հայքի տարածքը:
3) Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I–ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակվեց Մեծ Հայքի տարածքը:
4) Ք.ա. 92թ. սկսված հռոմեա–պարթևական բանակցությունների արդյունքում Հայաստանի դեմ ուղղված պայմանագիր կնքվեց:
5) Մերձավոր Արևելքում Սելևկյան պետության դիրքերը թուլացնելու նպատակով Արտաշես I–ը աջակցեց Մարաստանի սատրապ Տիմարքոսի ապստամբությանը:

3. Գտնել երկու ճիշտ պնդումները. *(0,5 X 2 = 1 միավոր)*

1) Ք. ա. 830–ական թթ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջաններում կազմավորվել էր Էթիունի երկրի համադաշնությունը:
2) Արգիշտի I–ի օրոք Վանի թագավորությունը (Բիայնիլի–Ուրարտու–Արարատ) հասավ աննախադեպ հաջողությունների՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն ուժի:
3) Արգիշտի I–ի որդին՝ Արգիշտի II–ը, թեև գահ բարձրացավ դժվարին ժամանակաշրջանում, սակայն կարողացավ զարկ տալ քաղաքաշինությանը, արհեստներին ու առևտրին, հիմնեց կամ վերակառուցեց բազմաթիվ ամրոցներ, անցկացրեց նոր ջրանցքներ:

4) Ռուսա III–ի իշխանության շրջանից մեզ հասած արձանագրությունները հայտնաբերվել են Արարատյան դաշտի և Վանա լճի արևելյան շրջանների հնավայրերից:
5) Վանի թագավորության զորքի գերագույն հրամանատարը առաջին սպարապետն էր:
6) Մենուայի առաջին քայլերից մեկն էր Եփրատի աջափնյա հատվածում ամրապնդվելը, որի նվաճումից հետո էլ հիմնադրվում է ռազմավարական խոշոր հենակետ Մենուախինիլի քաղաքը:

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (6 միավոր)

ա. ***Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – րդ առաջադրանքներ:*** **(0,5 X 4 = 2 միավոր)**

1. **Ո՞ւմ օրոք կառուցվեց «Արքայական ճանապարհը»:**
   1) Դարեհ I 2) Արտաքսերքսես III 3) Դարեհ III 4) Քսերքսես I
2. **Ե՞րբ ավարտվեց Պելոպոնեսյան պատերազմը:**
   1) Ք.ա. 421 թ. 2) Ք.ա. 415 թ. 3) Ք.ա. 404 թ. 4) Ք.ա. 401 թ.
3. **Ե՞րբ տեղի ունեցավ «Ժողովուրդների ճակատամարտը» Կատալաունյան դաշտում:**
   1) 395 թ. 2) 410 թ. 3) 421 թ. 4) 451 թ.
4. **Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվեց՝**
   1) 1945թ. մայիսի 2-ին 3) 1945թ. օգոստոսի 9-ին
   2) 1945թ. մայիսի 9-ին 4) 1945թ. սեպտեմբերի 2-ին

բ. (1 X 2 = 2 միավոր)

1. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. ***(1 միավոր)***

ա) Կարոլինգների արքայատոհմի հաստատումը Ֆրանկական պետությունում
բ) Ռուսական առաջին օրենսգրքի՝ «Ռուսսկայա պրավդայի» ստեղծումը
գ) Ֆրանկների թագավորության առաջացումը
դ) Սուասոնի ճակատամարտը
ե) Բուլղարական թագավորության առաջացումը

1	2	3	4	5

2. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. ***(1 միավոր)***

ա) Անգլիական Արևելահնդկական ընկերության ստեղծումը
բ) Առաջին շոգենավի ստեղծումը
գ) Առաջին սահմանադրության ընդունումը Ֆրանսիայում
դ) ԱՄՆ-ի Սահմանադրության ընդունումը
ե) «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» ընդունումը Ֆրանսիայում

1	2	3	4	5

գ. (1 X 2 = 2 միավոր)

1. Տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան:

(0,5 X 2 = 1 միավոր)

1) 325 թ. Նիկիայի առաջին տիեզերական ժողովը դատապարտեց Նեստորի ուսմունքը և ընդունեց քրիստոնեական եկեղեցու Հավատո հանգանակը:
2) Կարթագենի եկեղեցական ժողովում (419 թ.) ընտրվեցին չորս ավետարանները, Հիսուսի առաքյալների գրած 21 թղթերը, որոնք միասին ստացան Նոր կտակարան անվանումը:
3) Կոստանդնուպոլսի պատրիարքը, որ կրում էր «տիեզերական պատրիարք» անվանումը, մինչև 1054 թ. ընդունում էր Հռոմի պապի գերագահությունը:
4) Բյուզանդական կայսր Հուստինիանոս I-ը ծնվել էր Մակեդոնիայում՝ չքավոր գյուղացու ընտանիքում:
5) Հուստինիանոս I-ի հրամանով կազմվեց «Քաղաքացիական իրավունքի հավաքածուն», ինչն այնուհետև լրացվեց նրան հաջորդած կայսեր՝ Լևոն Իմաստասերի օրոք:

2. Տրված փաստերից որո՞նք են սխալ: Ընտրել երկու պատասխան:

(0,5 X 2 = 1 միավոր)

1) 1871 թ. հունվարի 18-ին Բեռլինում, Ռայխստագի դահլիճում հանդիսավոր պայմաններում հռչակվեց Գերմանական կայսրության ստեղծումը:
2) 1871 թ. մարտի 18-ին սկսված ապստամբության արդյունքում ստեղծվեց նոր իշխանություն՝ Փարիզի կոմունան, որը գոյություն ունեցավ 72 օր:
3) 1861 թ. ԱՄՆ-ի նախագահ ընտրվեց Աբրահամ Լինկոլնը:
4) Ա. Լինկոլնի օրոք Սահմանադրության մեջ կատարված փոփոխությամբ ԱՄՆ-ում արգելվեցին ստրկությունը և հարկադիր աշխատանքի բոլոր ձևերը:
5) 1905 թ. հոկտեմբերի 17-ին հրապարակվեց Նիկոլայ II–ի մանիֆեստը, որով ցարը խոստանում էր հրավիրել Պետական դումա (օրենսդիր մարմին) և շնորհում էր ժողովրդավարական ազատություններ:

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (5 միավոր)

1. Ներկայացրե՛ք Հայոց թագավորությունները Ք. ա. 331-201 թվականներին.

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախության վերականգնումը: Հայկական թագավորությունները և Սելևկյան տերությունը:

(2,5 միավոր)

2. Ներկայացրե՛ք Հռոմեական կայսրությունը I-V դարերում.

Օգոստոսի պրինցիպատը: Վաղ կայսրությունը: Ուշ կայսրությունը: Արևմտյան կայսրության անկումը:

(2,5 միավոր)

Է. Մինասյան

Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

06.03.2018 թ.